կազմակերպել պիտի կարողանար։ Կենդանին չունի լեզու, որովհետև խօսել չէ իմանում, և այդ չէ կարող լինել, քանի որ նա գաղափարներից և մտապատկերներից զուրկ է։ Իրաւամբ ասում է Մաքս Միւլլէրը, լեզուն մեր Բուբիկոնն է, և ոչ մի կենդանի չէ կարող դորանից երբ և իցէ անցնել, այս է մեր իրական պատասխանը այն անձինքների դէմ, որոնք զարգացման մասին խօսում են, որոնք հաւատում են որ նոքա մարդկային ամեն ընդունակութեանց սկզբնական սաղմերը կապիկների մէջ են գտնում, և որոնք հնարաւորութեան գաղափարի հիման վերայ ասում են թէ մարդը մի բարձրաձգ, կատարելագործուած կենդանի է և գոյութեան սկզբնական կուռուի մէջ յաղթանակ տանող դիւցազն։ Լեզուն աւելի շօշափելի որոշիչ յատկանիշ է մարդու համար, քան թէ ուղեղի ծալքը, կամ գանկի կազմուածքը»։

(Շարունակելի) Թարգմ. ՍԱՐԳԻՍ Տ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆՑ

ԱՋԳԱՅԻՆ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն)

—

15ին Սեպտեմբերի 3 ժամ 5 րոպէ կեսօրից յետ, երբ Նորին Օծութիւնը բերող առանձին գնացքը ծանրութեամբ մօտեցաւ Թիֆլիզի Կայարանին, որա պատշգամբում ժողոված Հայերն և Հոմքարներն իրանց դրօշակներով թնդացրին օդը «Կեցցէ» աղաղակներով։ Կայարանի պատշգամբում դիմաւորեցին Վեհափառ Հայրապետին Թիֆլիզի քաղաքագլուխն, ոստիկանապետն և այլ պատուաւոր քաղաքացիք։ Նորին Օծութիւնը ուղեկցութեամբ իւր պաշտօնեաների անցաւ բազմութեան միջով և մտաւ կայսերական սենեակներն, ուր նրան ներկայացան շատ պատուաւոր անձինք. դուրսը պատրաստ կանգնած էր քառա-

ձի կառքը։ Ս. Հայրապետը բարեհաճեցաւ մտնել կառքն, որին հետևեցին երկար շարք կառքերի և խուռն բազմութիւն, և որ առաջ գնաց դէպի Աղէքսանդրեան այգին, որոյ հանդէպ հայ եկեղեցական դասը զգեստաւորված սպասումէր իւր եկեղեցւոյ Պետին։ Այստեղից մինչև Վանաց մայր եկեղեցին ճանապարհը յարդարած էր, ինչպէս կվայելէր օրուան հանդիսին։ Բարձրաստիճան անձինք և պատուաւոր քաղաքացիք յարգեցին Նորին Օծութիւնն իրանց ներկայութեամբ։ Նորին Օծութիւնը հետիոտս գնումէր ամպհովանու տակ, որ կրումէին չորս պատուաւոր անձինք։ Մայր եկեղեցումէ Վեհափառ Տէրը կատարեց համառօտ աղօթք և դիմելով դէպի ժողովուրդն ողջունեց նրան Ս. Աթոռի կողմից։ որտեղից ինքն եկել է յայտնելու Նորին Կայսերական մեծութեան թէ հայ եկեղեցական դասի ու հօտի և թէ իւր սեպհական հաւատարմութեան զգացմունքները, և յորդորեց ժողովրդեան ջերմեռանդութեամբ աղօթել առ Ամենաբարձրեալն, որպէս զի Կովկասը, բաղդաւորված իւր Թագաւորի այցելութեամբ, թողնէ նորա վերայ ուրախ և ամբիչ տպաւորութիւն։ Նորին Օծութիւնը վերջացրեց իւր ճառը, «Օրհնեսցէ Տէր զմուտ և զել նորա» խօսքերով, որոնք ժողովուրդը կնքեց միաձայն ամէնով։ Եկեղեցուց Նորին Օծութիւնը հայ դպրոցների աշակերտների և տշակերտուհիների միջով, որոնք շարուած էին եկեղեցուց մինչև Վեհարանի սանդուղները, և անընդհատ «կեցցէ՛ով» թնդացնում օդը, բարձրացաւ Վեհարանի սանդուղների գլուխն, որտեղից օրհնեց ժողովրդեան և մտաւ ներս, ուր Նրան դիմաւորեց նահանգապետի օգնական իշխան Շիրվաշիձէն։ Կարճատև խօսակցութիւնից յետ նահանգապետի, քաղաքագլխի և այլոց հետ, Նորին Օծութիւնը մտաւ ներսի սենեակները հանգստանալու։

16ին Նորին Օծութեան սկսան ներկայանալ բարձրաստիճան անձինք։ Ի միջի այլոց ներկայացան՝ ֆրանսիական, Պարսից և Օսմանեան հիւպատոսները, նոյնպէս և Պարսկաստանից եկած լիազօր դեսպանն Ռուսաց իշխան Ն. Դոլգորուկին. Կովկասեան Ուսումնարանական շրջանի հոգաբարձու Պ. Եանովսկին նոյնպէս պատիւ ունեցաւ ներկայանալու Նորին Օծութեան։ Այցելեցին նոյնպէս և Պարսից արքայազնը, իշխան Լ. Մելիքովն, իսկ Վրաց ազնուականների կողմից իշխան Դ. Մուխրանսկին.

տեսակցութիւն կայացաւ և Վրաստանի Սր. Էքզարքոսի հետ։ Մի խօսքով 16ից մինչև սեպտեմբերի 28ը, որ նշանաւոր և անմոռանալի օր է Կովկասի համար, Նորին Օծութիւնը շարունակ ընդունում էր թէ պաշտօնատար, թէ քաղաքացի և թէ խնդրատու անձանց։

Վեհափառն անհամբերութեամբ սպասում էր Թագաւոր Կայսեր գալստեան օրին։ Նորին Մեծութեան գալստեան նախընթաց օրը գլխաւոր Կառավարչապետի օգնական գեներալ ատիւտանտ Պ. Շերեմետեւը ներկայացաւ Նորին Օծութեան յայտնեց և գրաւոր կերպով հաղորդեց, որ Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը բարեհաճել է իւր գալստեան օրը 2 5/4 ժամին զկնի կիսաւուր նշանակել Նորին Օծութեան համար առանձին ընդունելութիւն։ Այս տեսակցութեան ժամանակ կարող են ներկայ գտանվել Թադէոս Արքեպիսկոպոս և Վեհ. Հայրապետի Թարգման Գրիգոր Եպիսկոպոս Աղաւիրեանցը։ Իսկ Թիֆլիզի առաջնորդ Արիստակէս Եպիսկոպոսն և Վեհափառի քարտուղար Սահակ վարդապետը պատիւ կունենան ներկայանալու Նորին Մեծութեան ընդհանուր ընդունելութեան ժամանակ։ Նշանակած ժամանակ Նորին Վեհափառութիւնը գնաց պալատը և իւր աստիճանին վայել յարգանօք և պատուով բաղդ ունեցաւ առանձնապէս ներկայանալու Նոցին Մեծութեանց։ Նոցին Մեծութիւնք Թագաւոր Կայսրն և Թագուհին առանձին ուշադրութիւն դարձրին Նորին Վեհափառութեան վերայ, որ ասաց հետևեալ ուղերձը։

«Երջանիկ զանձն իմ հոմարիմ, Տէր արքայ, զի ի վերջին աւուրս կենաց իմոց անգամ մի ևս արժանաւորիմ ներկայանալ Ձերդ Կայսերակոն Մեծութեան և զիմ ամենահաւատարիմ հպատակութեան զգացմունս խառն ընդ նոյնպիսի զգացմանց հոգևորականութեան և հօտին իմոյ սիրել առաջի Աթոռոյ Մեծի Ինքնակալիդ, որով և խոնարհաբար շնորհաւորել զշնորհաբեր այցելութիւն Մեծի Թագաւորիդ իմոյ՝ կողմանցս Կովկասու։

Ցոյս իմ հաստատուն է առ Աստուած, Տէր Արքայ, զի նշանաւոր օրս այս հանդիսավեհ ողորմածագոյն այցելութեան Օծեալդ Աստուծոյ յայսմհետէ առաւել ևս խորագոյնս տպաւորեսցէ ի միտս և ի սիրտս մատաղ սերնդոց հօտի իմոյ և ամե-

նից Կովկասաբնակ քրիստոնեայ ազգաց զՀոգի Աստուածպաշտութեան, կրօնասիրութեան և հաւատարիմ հպատակութեան առ Գահն Մեծին Ռուսիոյ համաձայն աստուածային օրինաց։

Ուրեմն ներեսցի ինձ կրկնել աստանօր զբան Մարգարէին Դաւթի, «Տէր պահեսցէ զՔեզ յամենայն չարէ, պահեսցէ Տէր զանձն Քո, Տէր պահեսցէ զմուտ և զելս Քո յայսմհետէ մինչև յաւիտեան. ամէն»։

Ապա Նորին Մեծութիւնք նստելով հրաւիրեցին և Ս. Վեհափառին նստել իրանց հանդէպ բազկաթոռի վերայ։

Խօսակցութիւնը տևեց 1/4 ժամից աւելի։ Սրանից յետոյ Նորին Վեհափառութիւնը այցելեց Թագաժառանգ Նիկոլայ Աղէքսանդրովչին, որ յայտնեց ցանկութիւն այց ելանելու Ս. Էջմիածին։ Ցոյժ ուրախացած այս արտայայտութեամբ Նորին Վեհափառութիւնն ասաց, թէ ցանկալի էր իրան, որ այդ դէպքը շուտով տեղի ունենար, որպէս զի ինքն անձամբ կարող լինէր Ամենաբարձրելոյն օրհնութիւնը մաղթել Իշման Ս. Սեղանի առաջ Ռուսաստանի ժառանգի համար։ Նորին Վեհափառութիւնը վերադարձաւ Վեհարան 3 1/2 ժամին։

Միւս օր Նորին Վեհափառութեան այցելեց Նորին Մեծութեան պալատի գլխաւոր սարարողապետ իշխան Դոլգորուկին հարցնելու Նորին Օծութեան առողջութիւնը։

30ին սեպտեմբերի Նորին Վեհափառութիւնը հրաւիրուեցաւ պալատ բարձրագոյն ճաշկերոյթի, որից յետոյ Նորին Մեծութիւնը պատուեց Վեհափառ Հայրապետին խօսակցելով Նորա հետ։ Նորին Մեծութեան Թիֆլիզից դուրս գնալից յետոյ 1ին հոկտեմբերի Վեհափառ Հայրապետն տուեց ոմանց փոխայցելութիւն, իսկ այլոց մօտ ուղարկեց իւր եպիսկոպոսներին, վճռելով մնալ Թիֆլիզում, մինչև որ Նորին Մեծութիւն Թագաւոր կայսրն և իւր ընտանիքը յաջողութեամբ կթողնեն Կովկասը։ 2ից սեպտեմբերի Վեհափառ Հայրապետը զբաղեցաւ եկեղեցական և դպրոցական գործերով. այցելեց Ներսիսեան, Գայիանեան, Ցոմնանեան և Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցներն, որոնց մասին արդէն հրատարակած է Արարատում։ Նոյնպէս զբաղեցաւ կարգադրելով անյետաձգելի գործերն և ընդունելով բազմաթիւ խնդրատուներին։

Այս միջոցին Բագուից և Գանձակից եկան պատգամաւորներ,

խնդրելու, որ Նորին Օծութիւնը բաղդաւորէ այդ քաղաքների հայ հասարակութիւնքն իւր այցելութեամբ և օրհնութեամբ։

Հասաւ և այն բաղդաւոր օրն, երբ Կովկասին անմոռանալի Նորին Կայսերական Բարձրութիւն, նախկին փոխարքայ Միխայէլ Նիկոլայեվիչը բաղդաւորեց Թիֆլիզը իւր գալստեամբ, այդ օրը 13 էր հոկտեմբերի։ Վեհափառ Հայրապետը տեղեկանալով Նորին Բարձրութեան գալստեան, որոյ փոխարքայութեան ժամանակ ինքն Թիֆլիզի թեմական առաջնորդի պաշտօնն էր վարում, ցանկացաւ տեսակցել Նորին Բարձրութեան հետ։ Նորին Կայսերական Բարձրութիւնը իւր ատիւտանտի միջնորդութեամբ իմաց տուեց, որ իւր ընտանեօք կսպասէ Վեհափառին 2½ ժամին զինի կեսուրուր երկաթուղու կայարանի սրքունական սենեակներում։ Որոշեալ ժամանակը Նորին Վեհափառութիւնը, ունելով հետը իբրև թարգման Սինոդի առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ Գ. Ռ. Մելիք—Ադամեանցին՝ գնաց տեսութեան։ Նորին օծութեան և Մեծ Իշխանի տեսակցութիւնը մտերմական էր և սիրալիր։ Մեծ Իշխանուհի Օլգայ Ֆէոդորովնան իւր երիք զաւակներով յայտնեց անկեղծ ուրախութիւն տեսնելու Նորին Օծութեան և ստանալու նորա օրհնութիւնը։ Վեհափառը սղջունեց Նորին Բարձրութեան հետևեալ խօսքերով. Շնորհակալ եմ Նախախնամութիւնից, որ կարգադրեց այնպէս, որ այսօր Ձեր Բարձրութեան ծննդեան տօնի օրը կարողանում եմ շնորհաւորել Ձեզ այն երկրում, որ բաղդաւորուած է Ձեզմով. Թող Աստուած պահպանէ Ձեզ և Ձեր ընտանիքը ընդ երկայն աւուրս ի փառս հայրենեաց և ի միխիթարութիւն սրտի իմոյ։ Նորին Բարձրութիւնը զգածուած այս խօսքերից յայտնեց, որ ի սրտէ ուրախ է, որ տեսնում է Նորին Վեհափառութեան հետ հէնց այս երկրում, և հաւաստիացրեց Նորին Վեհափառութեան, որ Թագաւոր Կայսեր այցելութիւնը Կովկասի բոլոր ազգութեանց համար կունենայ բարերար ազդեցութիւն և հետևանք։ ըստորում Թագաւոր Կայսեր սրտին միապէս մտիկ են նորա բոլոր հպատակ ազգերն։ Ապա սկսաւ խոսակցել ընտանեկան խօսակցութիւնն։ որ տևեց մօտ ½ ժամ։ Նորին Վեհափառութիւնը քաղցր տպաւորութեամբ վերադարձաւ վեհարան։

15ին հոկտ. Թագաւոր Կայսեր Կովկասից մեկնելիս գնաց Գ.

գլխաւոր Կառավարչապետ իշխան Դոնդուկով—Կորսակովը վերադարձաւ Թիֆլիզ։ 16ին հոկտեմբերի առաւօտեան 10 ժամին Նորին Օծութիւնը այցելեց Պ. գլխաւոր Կառավարիչ իշխան Ալ. Միխ. Դոնդուկով—Կորսակովին, որոյ հետ ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ունեցաւ երկարատև խօսակցութիւն Վեհափառին յոյժ զբաղեցնող և Նորա հոգացողութեան առարկայ եղող խնդիրների մասին։ Այդ երկարատև խօսակցութիւնից յետո Նորին Օծութիւնը մեկնեցաւ մխիթարած և լի յուսով։ Նոյն օրը 1/2 ժամից յետո Նորին Պայծառափայլութիւնը փոխայցելութիւն տուեց և մնաց Նորին Օծութեան մօտ մի ժամ։

19ին հոկտեմբերի Նորին Օծութիւնը յայտնեց, որ զիջանելով Բաքուի հայ հասարակութեան խնդրանաց, ողորմութեամբ Աստուծոյ ճանապարհորդելու է Բաքու, այցելելու համար իւր հօտն, որ մինչև ցայժմ ոչ մի անգամ տեսած չէր իւր քաղաքում իւր Օծեալ Հայրապետին։ Նորին Օծութեան դիտաւորութեան մասին Կառավարչապետի դիւանատան Կառավարչի միջոցով հրամանագրուեցաւ իշխանութեանց, որպէս զի պատրաստուի առանձին գնացք երկաթուղու Բաքու գնալու և այստեղից էլ Աղստաֆա վերադառնալու, ինչպէս և այստեղից մինչև Ս. Էջմիածին ուղևորուելու համար կարևոր պատրաստութիւնք լինին կառքերի և ձիերի։ 21ին Վեհափառը առաւօտեան 11 ժամին հրաժարական ողջոյն տուեց Պ. Կառավարչապետին, որ ցաւ յայտնեց, թէ տկարութեան պատճառով զրկվում է ուրախութիւնից անձամբ ներկայ լինելու Նորին Օծութեան մեկնելու ժամանակ, ուստի և այդ պատիւը յանձնում է իւր դիւանատան կառավարչին։

Նոյն օրը առաւօտեան, Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց իւր մօտ հրաւիրել Թիֆլիզի եկեղեցիների բոլոր աւագ քահանաներին, իւր վերջին պատուէրներն ու խրատները նոցա աւանդելու։ Նորին Վեհափառութիւնը, յորդորելով քահանաներին, որ արի և անարատ լինին իրանց պաշտօնավարութեանց մէջ, պատուիրեց ի միջի այլոց՝

Որ բարեպաշտական, մարդասիրական և բարեգործական ընկերութիւններ արծարծեն իրանց խնամոցը յանձնուած հոգևոր հօտի մէջ։ Թիֆլիզումը կան բազմաթիւ ընկերութիւններ,

որոնք շատ բարի նպատակներ ունին. բայց տեղական հայ ազգայնոց կողմից արժանաւորապէս չեն օժանդակուում։ Պէտք է ի ժամու և ի տարաժամու յորդորել ժողովրդին, որ այդ ընկերութիւններին նպաստ տալու գործից չըհրաժարուի, որպէս զի նոքա էլ կարողանան իրանց նախագծած գաղափարը իրագործել։

- Որ Թիֆլիզի գործակատարները դիմել են իրան մի աղդաթ բաղ+ով, թէ իրանք, ճնշուած լինելով առօրեայ ծառայական պաշտօնավարութեամբ, մինչև անգամ հանդիսաւոր տօներին և կիրակի օրերը միջոց չունին եկեղեցի յաճախելու։ Յորդորեցէք ձեր ժողովրդին, որոնք վաճառական են կամ գործարաններ ունին, որ սուրբ պահեն տօն և կիրակի օրերը, և համաձայն աստուածային պատուիրանին, վեց օր աշխատելուց և աշխատեցնելուց յետոյ, եօթներորդ օրը Աստուծուն նուիրեն, թէ իրանք եկեղեցի գնան և թէ իրանց գործակատարներին եկեղեցի ուղարկեն։ Հասկացրէք ժողովրդի պատուաւոր և առաջաւորանդամներին, ասաց Նորին Օծութիւնը, նոյնպէս և ատնաՁնեերին, որ հոգևոր գործերի մէջ անձնական միջամտութիւններ չանեն, խնդրելով այս ինչ քահանայի համար կամիլավկայ, միւսի համար աւագ քահանայութիւն և այլն. փորձով գիտեմ, որ այդ ընտրութիւն ունեցած ատորագրութիւնները, խնդիրները, աղերսագրերը շատ անգամ հետևանք են որևէ հոգեւորականի կամ նորա մերձաւորի յամառ թախանձանքի։ Եա, որպէս հոգևոր պետ, ուելի լաւ կըճանաչեմ իմ ատորագրեալներին և կպարգևատրեմ և պարգևազուրկ կանեմ նրանց իրանց արժանաւորութեանց համեմատ։ Թող ժողովուրդն աւելի կարևորագոյն խնդիրների համար դիմէ ինձ։

Այս և սորա նման յորդորներ և խրատները տալուց յետոյ, Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց օրհնել և արձակել քահանաներին։

Երեկոյեան 4 ժամին, Վեհափառ Հայրապետը Թադէոս Արքեպիսկոպոսի, Արիստակէս Եպիսկոպոսի, Սահակ վարդապետի և Պ. Մելիք Ադամեանի ուղեկցութեամբ երկաթուղու արտակարգ գնացքով ուղևորուեցաւ Բագու։ Քաղաքիս եկեղեցիների զննդահարութեամբ արդէն ժողովուած էր վանքի գաւթում խուռն բազմութիւն, Ներսիսեան և Յովհաննեան ուսումնա-

բանների աշակերտների, աշակերտուհիների, ուսուցիչների և ուսուցչուհիների հետ։ Թիֆլիզի քահանաները փիլոնների՝ երկարգ շարուած առաջնորդարանից մինչև եկեղեցու դուռը՝ սպասում էին Նորին Վեհափառութեան։ Վեհափառը 3 ժամին իջաւ եկեղեցի և այնտեղից դուրս գալով, օրհնեց ժողովրդին ու կառք նստելով ուղևորուեց դէպի երկաթուղու կայարանն, ուր արքայական սենեակները պատրաստած էին Նորին Օծութեան ընդունելու համար։

Այնտեղ Նորին Վեհափառութեան դիմաւորեցին կառավարչապետի կողմից նորա դիւանատան կառավարիչ գնդապետ Գ. Շատիլովը, նահանգապետ Իշխան Շերվաշիձէն, քաղաքագլուխն և հայ հասարակութեան ներկայացուցիչները։

Վեհափառը ճիշդ 3 ժամ 50 րոպէին բարեհաճեց մտնել երկաթուղու կառքը, և այնտեղից «պահպանիչով» օրհնեց իւր հօտը։ Ճիշդ 4 ժամին գնացքը շարժուեցաւ իւր տեղից։

Նոյն օրը գիշերուայ 9½ ժամին Նորին Օծութիւնը ժամանեց Դանձակի իջևանն, ուր քաղաքի հայ եկեղեցական դասն և հասարակութիւնը դիմաւորեցին Նորին Սրբութեան և սաղցան Նորա օրհնութիւնը։ Իսկ լոյս 22ի գիշերուայ մի ժամին, Նորին Օծութիւնը բարեհաճեցաւ ընդունել Եալխի իջևանում Ղարաբաղի թեմական առաջնորդին իւր եկեղեցական դասով և շատ Շուշեցիների, որոնք եկել էին արտայայտելու Նորին Վեհափառութեան իրանց որդիական հաւատարմութեան զգացմունքները։

Հոկտեմբերի 22-ին առաւօտից երկինքը ամպած էր, երկիւղ կար որ անձրևէր. բայց մի փոքրիկ շաղից յետոյ սկսեց անսպասելի զով եղանակն. օրը մաքրուեց, փողոցները հովացան, արևը սկսեց երևիլ, մի խօսքով հրաշալի եղանակ էր։ Դեռ ժամը 8ին առաւօտեան Բաքուի հայ հասարակութեան մէջ տիրում էր մի ուրախ և ոգևորված իրարանցում. ամեն ոք սպասում էր, որ ժամը 9ին Վեհափառ հիւրը կը ժամանէ Բաքու. բազմութիւնը գնալով շատացաւ, խռնուելով հրապարակը, եկեղեցւոյ շուրջը և մինչև երկաթուղին տանող ճիգ ճանապարհը և փողոցները։ Զանգակի անոյշ ձայնն իւր ուրախացուցիչ զօղանջիւնով հրաւիրում էր Լուսաւորչի զաւակներին՝ ժամի առաջ պատրաստուել՝ ընդունելու մեծ Գրիգորիոսի փո-

խանորդին։ Ժամը 12 ին արդէն երկաթուղու կայարանում ասել գցելու տեղ չկար։ Օրը շաբաթ էր. ուստի ոչ ոք տոն, հրէից կիւրակի և հայոց յաւերժայիշատակ հիւրընկալութեան օր։ Սրատարոփ սպասում էր նշանակեալ րոպէն, երբ յանկարծ լսվեց՝ «գնացքը գալիս է»։ Հանդիսատեսները վերցրին իրանց գդակները։ Վերջապէս, գնացքը եկաւ և կանգ առաւ. ամենքի աչքերը Վեհափառին էին պտրում. մէկը միւսի հետևից ցած եկան արքեպիսկոպոսներն, եպիսկոպոսներն և վարդապետները. հուսկ յետոյ երևեցան զոյգ կարմրազգեստ շաթիրները. ապա երևեցաւ Վեհափառ Հայրապետը։ Մի բոպէում օդը թնդաց ուրախական աղաղակներով «Կեցցէ Վեհափառ Հայրապետը, կեցցէ Մակար առաջին»։

Ուրախական այդ աղաղակները երկար կտևէին եթէ Վեհափառը վերջ չդնէր. Նա Իւր՝ ծերութեան դրոշմն արդէն ընկալած՝ աջը բարձրացրեց, խաչակնքեց ամենքին, օրհնելով իւր հաւատարիմ ժողովրդին։

Պաշտօնական մարդիկ մօտեցան Նորին Վեհափառութեան և, համբուրելով Նորա սուրբ աջը, շնորհաւորեցին Նորա գալուստն ի Բագու։ Ներկայ էին տեղային հոգևորականներն ի թիւս որոց և Շամախու թեմական առաջնորդ Մեսրովբ եպիսկոպոսը քաղաքագլուխ պ. Դեսպոտ Զինովիչը, ոստիկանապետը, Մարդասիրական ընկերութեան այժմեան նախագահ պ. Անտոնեանը, ուրիշ շատ հիմնարկութեանց ներկայացուցիչներ, բարձր վաճառականներ, որոնց թուում և թուրք Հաջի Զէյնալ Աբդինը և այլ շատ թուրքեր։ Վեհափառը ամենին ընդունեց հայրաբար և օրհնեց բոլորին։ Նորից բարձրացաւ ժողովրդեան ուրախական աղաղակը՝ «Կեցցէ Վեհափառ Հայրապետը, կեցցէ Մակար Ա.»։

Կայարանի երկար սանդուղներով Վեհափառը քաղաքագլուխի և Նորա օգնականի օգնութեամբ իջաւ և մտաւ երկշար քառաձի շքեղ կառքի մէջ։ Երկու խաչաբարձ քահանաներ ձիերով գնացին առաջ։ Հրաշալի և տոնին ըստ ամենայնի պատշաճաւոր եղանակ էր։ Կառքը գնում էր հանդարտ, շրջապատուած քսանչափ հեծելազօրքով և շաթիրներով. Նորան հետևում էին 150 ի չափ կառքեր, որոնց մէջ տեղ տեղ երևում էին հայկական վեղարներ։ Դիմաւորող ժողովրդին Վեհափառը

օրհնում էր, խաչակնքելով նոցա։ Վեհափառին ուղեկցում էին Շամախւոյ նախկին թեմական առաջնորդ, ծերունի Թադէոս Արքեպիսկոպոսը, Արիստակէս Սրբազանը, Շուշիի առաջնորդ Այվազեան եպիսկոպոսը, Հաղարծնայ վանուց վանահայր Պօղոս վարդապետ Մարգարեանն և գաւազանակիր Սահակ վարդապետ Բաղդասարեանը։

Անցնելի փողոցներում տները զարդարուած էին եռագոյն դրօշակներով, կապերտներով և ծաղիկներով, հոգևորական դասը զգեստաւորուած սպասում էր հրապարակի վերայ, որի ամբողջ երկարութեամբ ձգած էր կարմիր մահուդ, նեղ անցքի երկու կողմով շարուած էին հայ ուսանողուհիները, բէալական դպրոցի հայ աշակերտները և մեր ծխական երկսեռ դպրոցների սանները։

Վեհափառը շուրջառը գցելով՝ քաղաքագլխի և Մ. ընկ. նախագահի օգնութեամբ՝ ուղղուեց դէպի եկեղեցի, յատուկ պատրաստած ամպ-հովանին բռնած էին պ. պ. Միրզայեան, Ադամեան, Դիլդարեան և Շահգեդանեան, փոփոխակի և ուրիշները։ Ժամանելով եկեղեցի, Վեհափառը օրհնեց ժողովրդին, քաջալերելով «Բագուի հայոց մարդասիրութիւնը»։ Մաղթանքից յետոյ Նորին Վեհափառութիւնն ուղեկցութեամբ հոգևորական դասի գնաց մինչև պ. Գէորգ Լալայեանի տունը, ուր յատուկ Վեհափառի համար կահաւորուած էր վերին աստիճանի շքեղ մի իջևան։ Վեհափառը «պահպանիչով» արձակեց ժողովրդին. այստեղ Նորից օդը թնդաց ծերերի և մանուկների ու համայն ժողովրդեան «Կեցցէ Վեհափառը» աղաղակներից։

Այստեղ ներկայացան Նորին Վեհափառութեան՝ նահանգապետը, ժանդարմների գլխաւորը, թուրքերի Մուֆթին, Տաճկաց և Պարսից հիւպատոսներն և շատ ուրիշները։ Վեհափառը ամենի հետ էլ հանդիսաւոր և պատշաճաւոր խօսակցութիւն ունեցաւ։

Երեկոյեան եկեղեցւոյ շուրջը գոյնզգոյն ճրագների շղթան դրօշակների հետ, կարծես, արտաքինով արտայայտում էին եկեղեցւոյ ներքին ուրախութիւնը, որ նա զգում էր իւր Մեծ Հիմնադրի փոխանորդի ներկայութեամբ։

Միւս օրը հանդիսաւոր պատարագ էր. պատարագիչն էր Այվազեան եպիսկոպոսը։

Ամբոխը եկեղեցում այնպէս էր խռնուած, որ անհնարին էր շարժուել։ Փողոցն և եկեղեցու բակը կատարելապէս անանցանելի էին դարձել։

Օրը կիւրակի էր, այդ օրը պէտք է Բագուի երկոսեռ դպրոցների համար կառուցանելի մեծ շինութեան հիմքը դնուէր, ամբոխի ծայրը վերջանում էր այստեղ։ Ժամանակաւոր գմբէթը փայլում էր այստեղ, դրօշակներ և զարմանալի անոյշ եղանակը մի աքանչելի ներդաշնակութեամբ դիւթել էին ժողովրդին։

Աննկարագրելի է այն շքեղութիւնն, որով կատարուեցաւ հիմնարկութիւնը. Վեհափառը հրամայեց Այվազեան սրբազանին և սա գեղեցիկ առոգանութեամբ ասաց հիմնարկութեան հանդիսին յարմար մի քարոզ, որ ժողովուրդը «կեցցէներով» վարձատրեց։ Հանդիսին նոյնպէս ներկայ էին բոլոր յիշած պաշտօնական բարձր անձինք։ Իսկ Մարդ. Ընկերութիւնը մինչ 1000 մարդու նախաճաշիկ տուեց։

Կէսօրին նշանակուած էր ճաշ հարիւր յիսուն անձանց համար պ. Բալիբեանի տանը. ճաշին երգում էր Կարա-Միրզայի խումբը։ Ճաշը անցաւ շատ լաւ և ոգևորիչ ձևով։ Վեհափառը յիշատակելով իւր ականատես և հին ժամանակի մեր ազգի տխուր անցեալը, և ներկայ նախանձելի վիճակը աւելացրեց, որ մենք մեր ներկայով պարտական ենք ռուսաց Կայսրների հովանաւորութեան. ապա Վեհափառը առաջարկեց բաժակ Կայսեր թանկագին կենացը։ Կարա-Մուրզայի խումբը երգեց «Աստուած պահեա արքային»։ Պ. Նահանգապետն առաջարկեց Վեհափառի կենացը։ Ժամը 4-ին Վեհափառը վերադարձաւ Իւր բնակարանը։

Երեկոյեան նորին Վեհափառութիւնը բարեհաճեց հոգևորական դասի և ուրիշ շատերի հետ շոգենաւով գնալ «Կրակները» *) նայելու. մի ուրիշ շոգենաւով ուղեկցում էին տիկնայք, օրիորդներ և Կարա-Մուրզայի խումբը։ երգելով ազգային երգեր։ Երեկոյեան նոյնպէս եկեղեցու շուրջը ճրագալոյց էր։

---

*) «Կրակներ» ասուածը Բագուի հետաքրքրելի տեսարաններից մէկն է, ինչ որ թեթև գազ ինքնաբուղխ ծովի վերայ դուրս եկող. վառում են և բոցավառուելով ներկայացնում է գեղեցիկ տեսարան։

Երկուշաբթի, հոկտ. 24-ին կէսօրուան 12 ժամին Նորին Վեհափառութիւնը այցելեց եկեղեցիք ու քաղաքամիջի հին եկեղեցուց իջնելով և օրհնելով շուրջ ժողովուած հասարակութիւնը՝ գնաց օրիորդաց Մարիամեան գիմնազիան ուղեկցութեամբ քաղաքագլուխ պ. Դեսպոտ Զենովի, Մարգասիրական Ընկերութեան նախագահ Պ. Խ. Անտոնեանի և այլ պատուաւոր քաղաքացւոց։ Նորին Վեհափառութիւնն հետն առած էր և Գերապատիւ Թադէոս ու Մեսրոպ Արքեպիսկոպոսներին, գաւազանակիր Սահակ վարդապետին և իւր առանձին յանձնարարութեանց աստիճանաւոր Պ. Ռ. Մելիք Ադամեանցին։ Գիմնազիայի փառահեղ գահլիճում արդէն խմբուած պատրաստուած էին բոլոր աշակերտուհիք՝ ուսուցիչներով և ուսուցչուհիներով հանդերձ ընդ տնօրէնութեամբ վերատեսուչ Պ. Կամենկու և կառավարչուհի տիկին Լիւտերի։ Այս տեղ վերատեսչի կարգադրութեամբ՝ եկած էին Ռէալական դպրոցի երգեցիկ աշակերտներն, որոնց հետ և աշակերտուհեաց երգեցիկ դասը միանալով Պ. Իրեցկու կառավարութեամբ և դաշնամուրի ձայնակցութեամբ՝ երբ Վեհափառ Կաթուղիկոսը մտնում էր դահլիճի մուտքին, սկսաւ երգել ընդունելութեան պատշաճ մի երգ։ Վեհափառը ներս մտնելով խաչի նշանով օրհնեց ուսանող խմբին և բոլոր այնտեղ ժողովուած անձանց՝ արանց և կանանց։ Երգասացութիւնը լուեց։ Յետ այնորիկ Նորին Վեհափառութիւնը զանազան հարցերով դիմեց մերթ վերատեսչին և մերթ կառավարչուհուն, ցանկանալով իմանալ թէ քանի՞ աշակերտուհի են ուսանում գիմնազիոնում, ինչ դասանութեան և ինչ ազգութեան են պատկանում նոքա և ինչպիսի յառաջադիմութիւն են ցոյց տալիս։ Պատասխաններից երևեցաւ, որ աշակերտուհեաց ընդհանուր թիւն է 240, որոնցից մեծագոյն մասն կազմում են ռուսուհիք և հայուհիք. յատկապէս վերջնոցս թիւն է 80. յետոյ յաջորդում են միւս ազգութիւններից. իսկ թրքուհի կայ մի հոգի միայն։ Նորին Վեհափառութիւնը կամենալով գաղափար կազմել աշակերտուհեաց յառաջադիմութեան յսփի և եղանակի մասին ևս՝ առաջարկեց կանչել Բ. դասարանից մի հայ և մի ռուս աշակերտուհի և կարդալ տալ, որոնք եկան և կարդացին Կրիլովի առակներից զանազան հատուածներ։ Վեհափառը գոհ մնաց պատասխաններից և օրհնեց փոք-

բիկներին։ Յետ այնորիկ ցանկութիւն յայտնեց ձեռագործ աշխատութիւններին և ծանօթանալ. բերուեցան մի քանի կոր ձեռագործ նիւթեր։ Ի վերջոյ երբ Նորին Վեհափառութիւնը ուզի ելաւ հրաժարական օրհնութիւնը բաշխելու գիմնազիոնի բոլոր պաշտօնեաներին և ուսանողներին՝ յառաջ եկան ուսուցիչներն և ուսուցչուհիք Նորին Օծութեան սուրբ աջն համբուրելու։ Նորին վեհափառութեան՝ գիմնազիոնում գտնուելու բոլոր ժամանակը մերթ ընդ մերթ երգւում էին զանազան երգեր ընտրութեամբ՝ այն ծրագրից, որ կազմուած էր Նոցին Կայսերական Մեծութեանց և նոցա Օգոստափառ Որդւոց այցելութեան ժամանակ համերգելու համար, ի միջի այլոց՝ սրանչելի ներդաշնակութեամբ և ազդուութեամբ երգուեցաւ ըստ ցանկութեան Վեհափառ Կաթուղիկոսին և յայտնի «Боже царя храни» մաղթանքն։ Երգերից վերջը Նորին Վեհափառութիւնն հարցրեց կառավարչուհուն, թէ հայ աշակերտուհիք կարո՞ղ են արդեօք հայերէն լեզուով երգել ինչ և է. տիկին Լիւտերն պատասխանեց թէ՝ այժմ չեն կարող, բայց եթէ մի այլ անգամ ինքն բաղդ ունենայ ընդունել Վեհափառ Հօրն գիմնազիայում՝ անշուշտ յառաջագոյն կը հոգայ, որ կարողանան երգել։

Այսպէս կէս ժամու չափ գիմնազիայում մնալուց յետոյ՝ Նորին Օծութիւնն կրկին անգամ օրհնեց բոլոր ներկայ եղողներին, գիմնազիայի հոգատարներին։ ու շնորհակալութիւն յայտնելով վերատեսուչ Պ. Կոմենկուն և կառավարչուհի տիկին Լիւտերին՝ բարեհաճեցաւ մեկնել՝ ախորժական տպաւորութիւններ թողլով ամենքի վերայ։

Երեքշաբթի առաւօտեան Նորին Օծութիւնը այցելեց գերեզմանատունն, եկեղեցական դասի հետ օրհնելու իւր հօրեղբօր Կարապետ վարդապետ Տէր Պետրոսեանի գերեզմանը։ Այստեղ Վեհափառ Հայրապետը զգածուած ասաց, որ եկեղեցականները պէտք է մոռանան իրանց անձը գործի սրբութեան համար, ինչպէս հանգուցեալն, որ խղճերայի ժամանակ եկել էր Բաքու անհոլիւ հօտը մխիթարելու և ինքն էլ զոհ գնացել իւր պարտաճանաչութեան։

Գերեզմանատնից վերադառնալով՝ Նորին Վեհափառութիւնն առաւօտեան 9½ ժամին իւր ուղեկից բոլոր եպիս-

կոպոսների հետ, բարեհաճեցաւ այցելել Հայոց Եկեղեցական — Ծխական երկդասեան ուսումնարաններն, որոնք գտնուում են Ս. Լուսաւորիչ եկեղեցու բակում։ Այստեղ Նորին Վեհափառութեանն դիմաւորեցին ուսումնարանաց հոգաբարձուներն, Մարդասիրական խորհրդոյ անդամներն և ուսուցչական խումբը տեսչի հետ միասին։ Այդ ժամանակ, երևի այդպէս կանուխ չսպասելով Վեհափառ Կաթուղիկոսի գալստեան՝ դեռ ևս ոչ ամենայն ինչ և ամենայն ոք կարգաւորուած էր. բայց իսկոյն և եթ կարգաւորեցաւ։ Նորին Վեհափառութիւնը հաճեցաւ մտնել օրիորդաց ուսումնարանի դահլիճն, որ ըստ կարելոյն վայելուչ զարդարուած էր։ Դահլիճի ճակատին գրուած էին Օգոստափառ Կայսեր և Վեհափառ Կաթուղիկոսի շքեղաշուք պատկերներն. միւս պատերի վերայ կախած էին նկարիչ Բաշինջաղեանի ձիթանկար մեծ պատկերներից մի քանիսը պատմական և տեղագրական տեսարաններով։ Դահլիճի մեծ մասն բռնած էին աշակերտաց և աշակերտուհեաց դասն, որոնք և համախումբ երգեցին յատկապէս Վեհափառ Կաթուղիկոսի այս աւուր այցելութեան համար ուսուցիչ Հ. Ղուկասեանցի յօրինած երգն («Ելցուք հապաղ, ելցուք ի խոնարհ ի յողջոյն» և լն) որ ձայնագրած և սովորեցրած էր ուսուցիչ Ս. Խաչատրեանցն։

Նորին Վեհափառութիւնն հրամայեց դուրս կանչել երկ-երկու աշակերտներ և աշակերտուհիներ իւրաքանչիւր բաժանումից, և կարդալ տալով, հարցափորձելով նոցա՝ օրհնեց և արձակեց. ապա կոչելով իւր մօտ ռուսաց լեզուի ուսուցչին՝ տեղեկութիւններ հարցրեց նորանից տարեկայի աւանդման ժամանակի, եղանակի, և յառաջադիմութեան մասին և պատուէր տուաւ աշխատել լաւ սովորեցնելու ռուսաց լեզուն։ Նորանից յետոյ աշակերտուհիները երգեցին «Տէր կէցո՛ զՀայս» մաղթանքը. ապա չորս փոքրիկ աշակերտուհիներ յառաջ եկան և մատուցին Նորին Վեհափառութեան մի գեղագործ և ծաղկահիւս բարձ իրանց ձեռագործից, որ և շատ հաւանելի թուեցաւ Վեհափառին։ Ապա երգուեցաւ «Ով Տէր» երգը, որից յետոյ Նորին Օծութիւնը բարեհաճեցաւ մտնել դահլիճին կից սենեակը։ որ Մարդասիրական Ընկերութեան խորհրդարանն է։ Այստեղ Վեհափառ Հայրն կամեցաւ մանրամասն ծանօթութիւն ունենալ ուսումնարանների ուսումնական և տնտեսա-

կան վիճակի մասին։ առ որ տեսուչ Պ. Գասպարեանն կարդաց հանմառօտ զեկուցաթերթ։ զոր և մատոյց Նորին Վեհափառութեան։ Այս միջոցին Հ. լեզուի և պատմութեան ուսուցիչ Պ. Հ. Ղուկասեանցն բաղդ ունեցաւ կարդալ խորին ղգածութեամբ հետևեալ ճառն։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՓԱՀԱՆԱՑԱՊԵՏ.

Դարք գրեթէ վեշտասանք անցին։ յորմէ հետէ Հայրն մեր Հայաստանեայց ի լոյս հոգևոր լուսաւորեաց զազգս Հայոց։ և անտի ցայս վայր ժամանակաց արժանընտիր ժառանգորդք Աթոռոյ Նորին փոյթ յանձինս կալան պահել զլոյսն անշէջ ի հոգիս որդւոց Եկեղեցւոյ յանսպառ երկնատեղաց լուսոյն։ զորս խորհրդաւոր իմն տեսլեամբ ի՛ջոյց Միածինն յԷջմիածին։ Ամպք մթագինք թէ մերթ ընդ մերթ ծածկէին զտեսիլ լուսեղէն սեռանն և արգել ծաւալելոյ շողիցն ի հայաբնակ վայրս լինէին։ այլ սակայն սիրտք հայորերոյն յայն ձգտէին կէտ անձկալի։ յայն միշտ՝ թէ ի ցնծութեան ժամն և թէ ի վշտից։ մինչ զի նիւթական իսկ քարամբք վեհավայրին լցուցանել համարէին զկարօտ իւրեանց՝ յաշխարհս հեռաւորս։ յորս վարէին վտարանդի՝ ծփմամբ ալեաց ժամանակին։ որպէս երբեմն Շահաբասեանն հատուած ի Պարսս։

Այո՛։ Վեհափառ Տէր։ սիրէին հայք և սիրեն անընդհատ։ զերթ թիթեռնիկ ճրագասէր։ փարիլ սրտիւք շուրջ զերկնաւոր սեռամն լուսոյ Միածնիջնեան։ Զնոյն իրաւ ընդանամք այսօր և հայկազունք քաղաքիս՝ ուրեալ ըզՄայր մեր կաթողին։ զսկզբնածին աղբիւրն կենսատու ճառագայթից Հայաստան աշխարհի։ փարիլ շուրջ զՀայրապետական Աթոռով։ յորմէ բազումս յուսամք մեք և մխիթար ընդունիմք ոչ սակաւ։

Ապաքէն։ որչա՞փ մեծ են հրճուանք մեր։ յորժամ տեսանեմք զանձկալի Հայրդ մեր գթառատ անձամբ անձին իջեալ ի բարձանց անտի վեհապետական Աթոռոյդ յայց առ մեզ՝ կազդուրել զմեզ ցայտմամբ շողից շնորհաց և կենսանորոգ պնդել զհոգիս մեր ի հաւատս կենդանութեան։ ի յոյս մխիթարութեան և ի սէր յառաջադիմութեան։ Տեսանեմք զՎեհափառութիւն Ձեր՝ այցելութեան շնորհս պարգևեալ ուսումնախնդիր մանկանցս։ խմբելոց ասա ի յարկիս մաւոր լուսոյ։ Այսպէս և միշտ՝ Հայրապետք մեր երանելիք ցուցանէին տաճարս լուսոյ գիտել զուսումնարանս ժողովրդեան։ համարել զնոսա նախադրունս եկեղեցւոյ։ քաջալեր տալ նոցա և հովանի պաշտպանութեան ածել զնոքաք։

Մեզ այս մեծահանդէս է։ զի խոնարհ սպասարկուքս ի տաճարիս մատաղերամ մանկամբքս հանդերձ՝ արժանի եղաք օրհնաբեր այցելութեան Մեծի Խնամակալիդ։

Ցիշատակ աւուրս անջնջելի դրոշմեսցի ի սիրտս մեր և ի հոգիս և յարձանագիրս։ Ընկալարո՛ւք, Վեհափառ Հայր, զիսնարհական ողջոյնս մեր և զհամբոյր որդիական՝ աջոյդ Սրբոյ։ Օրհնութիւն Օծեալ Ցեառնդ ընդ երկար ծաւալեսցի ի զաւակունս Հայաստանեայց Եկեղեցւոյ, որք մաղթեն ջերմագին. Կեցցէ՛ քաջ Հովուապետ հայազն հօտիս և Վեհափառ Հայրս մեր՝ Տէր Մակար, կեցցէ՛ ամս յամայր։

Վերջին խօսքն արտասանելուց յետոյ բոլոր ունկնդիր հասարակութիւնն գոչեց հրճուագին. «Կեցցէ՛ Վեհափառ Հայրն»։ Նորին Օծութիւնն շնորհ արաւ իւր մօտ առնելու ճառն, օրհնեց ճառախօսին և ապա ասաց ներկայ եղողներին, որ՝ Արդէն իսկ Եպիսկոպոսութիւնն մի նահատակութիւն է, որ այդ վսեմ պաշտօնն իւր վերայ կրողն յանձն է առնում ուխտիւ՝ իւր հօտի բարեաց համար. բայց և առաւել մեծ նահատակութիւն է Կաթուղիկոսական ծանր կոչումն, զոր ինքն պարտք է համարում տանել ամենայն անձնազոհութեամբ, փոխարէնն միութարուելով միայն իւր ազգի անկեղծ սիրովն։ Նորին Վեհափառութեան այս ազգու և խորհրդաւոր խօսքերն վերջացան «կեցցէ»ների անընդհատ աղաղակով, որ դուրսը և ներսը թնդացրին օդը։

Սորանից յետոյ Վեհափառն կամեցաւ տեսնել երկու ուսումնարանների բոլոր դասարանները զատ զատ, և երբ Նորին Վեհափառութիւնն ամենայն ինչ տեսաւ և հարկաւոր տեղեկութիւններն ստացած՝ դուրս եկաւ պատշգամբ՝ այստեղ երկշարք կանգնած գտաւ Ռէալական ուսումնարանի հայ աշակերտներին, որոնք թոյլտուութիւն էին ստացել իւրեանց վերատեսչից գալ ի համբոյր աջոյն Նորին Օծութեան։ Վեհափառն օրհնելով սոցա կրկին անգամ մնաւ ընկերութեան խորհրդարանն. իսկ աշակերտներն իսկոյն շարակարգուեցան դարձեալ օր. ուսումնարանի դահլիճում՝ ուր նոցանից երկուսն երջանիկ եղան իրաւունք ստանալ հետևեալ ոտանաւոր ուղերձները կարդալու Նորին Վեհափառութեան՝ յոյժ զգածուած.

ՁԵՐԴ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ։

Ընդունեցէք, Հայր Վեհափառ
Նուէրը այս փոքրիկ ինձնից.
Աղ հացի տեղ մի քանի բառ
Որոնք բղխած են իմ սրտի խորքից։

Ժամ է հասել ուրախութեան,
Ուրախացէ՛ք այսօր Բագու,
Որովհետև դու տեսութեան
Արժանացար մի Մեծ Մարդու։

Փառաւորվիր ու զարդարվիր
Հայր Գրիգորի օծեալ տաճար,
Քեզ երջանիկ դու համարիր՝
Նրա տեսութեանն արժանացար։

Թէև որ շատ է ունեցել
Հայրապետներ Սուրբ Աթոռը,
Բայց ոչ մէկը էլ չէր մտածել
Մի օր բանալ քո սուրբ դուռը։

Հայ եղբայրներ ուրախացէք
Այս օրը չէ օր հասարակ.
Կեցցէներով ձեր հիւսեցէք
Վեհի համար շքեղ պսակ։

Թող ձեզ համար լինի մշտական
Այս մեծ օրը Սուրբ յիշատակ,
Քաղցր առարկայ յիշողութեան
Համարեցէք այս դէպքը միակ։

Անբիծ սրտով ու լի հաւատով
Աղօթեցէք Տէր Քրիստոսին՝
Որ նա պահէ ղօրեղ ձեռքով
Ազգիս անքուն Պահապանին։

Այո՛, այո՛ Նա է միայն
Քաջ պահապան հանդիսանում
Մեր խեղճ ազգին անտխրական,
Ու Նրա համար միշտ աղօթում.

Դէ՛հ, կանչեցէք դու ք Ովսաննա
Եւ փառք տուէք անմահ Տէրին
Որ մեզ վերայ Նա միշտ խրղճայ
Երկար կեանք տայ վեհ Մակարին

ԻՍՐԱՑԷԼ ՂԱԶԻԵԱՆՑ.

—

ՁԵՐԴ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

Սիրտներս, լցուած բուռն ուրախութեամբ,
Բերումենք հանդարտ Ձեր ոտերի տակ,
Այժմ մենք երջանիկ ենք Ձեր տեսութեամբ,
«Երջանիկ ենք»—կը կոչենք մենք համարձակ,

—

Սուրբ գրքի ասած հեզ խոնարհութեամբ
Մենք սպասում էինք այս քաղցր ժամին,
Որ կարանք խորին երկիւղածութեամբ
Համբուրել աջը Տեառնդ ՄԱԿԱՐԻՆ։

—

Հեռու նախանձ ու ատելութիւն,
Այս ուրախ ժամում թո՛ղ դոքա կորչին,
Դոցա տեղը թող սէր ու միութիւն
Ուրախ ամբոխի վրայ թագաւորին։

—

Ձեռք ձեռքի տուած դիմենք Արարչին.—
Կրկնենք աղօթքն մեր ամենօրեայ—
Տէ՛ր, տուր երկար կեանք Տեառն ՄԱԿԱՐԻՆ,
Որ չը որբանայ խեղճ ազգդ Հայկեայ։

Դուք, Վեհափառ Տէր, մի մոռանաք մեզ,
Եւ երբ ծունկ չոքած Տիրոջ էք դիմում,
Յիշեցէք նրանց որ խոնարհութեամբ հեղ
Ձեր կենաց համար են միշտ աղօթում։

ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ ԴԱՎԱԵԱՆՑ.

Կաթուղիկոսն յայտնապէս սրտայուզուում էր այս մատաղահաս սերնդի զգացումներն նոցա պայծառ ճակատների վերայ կարդալով։ Ուստի և քաջալերելով խրախուսեց այն մատաղերամ աշակերտներին ասելով, որ նոքա աշխատեն իրանց մայրենի լեզուն լաւ ուսանել, իրանց սրտումն կրօնական զգացմունքը և սէր զարգացնել դէպի իրանց սուրբ եկեղեցին։ Պատանիք պատասխանեցին, որ զգացել են այդ և աշխատումեն Նորին Օծութեան ասածները լաւ տպաւորել իրանց սրտերում և մտքերում հէնց իրանց ապագայ երջանկութեան համար։ Նորին օծութիւնն այս լսելով մխիթարուած, «պահպանիչ» կարդալով և օրհնելով ամենեցուն շնորհակալութիւն մատոյց բոլոր գործիչներին և բարեհաճեցաւ դուրս ելնել շինութեան դաւթից և նստել իրան սպասող կառքն։ Բոլոր ճանապարհը, որով անցնելու էր Նորին Վեհափառութիւնը լի էր խուռներամ ժողովրդով, որ խորին ակնածութեամբ և «կեցցէ» գոչելով ցոյց էին տալիս իւրեանց անկեղծ յարգանքը և որդիական սէրը ազգիս Հայրապետին։ Նորին Սրբութեան ուղեկից եղան դարձեալ գերապատիւ եպիսկոպոսունք, վարդապետներ, Մարդասիրական ընկերութեան խորհրդի նախագահն և անդամներից որպէս և հոգաբարձուներից շատերը։

Նոյն օրը դպրոցների այցելութիւնից յետո Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց գնալ Բալախանի նաւթահորերը տեսնելու։ Պ. Մատուրեանը պատրաստել էր Մեծ հիւրի համար ճաշ։ Վեհափառը նաւթատէրերին յատուկ խրատեց՝ վարուել իրանց մշակների հետ լաւ։ Չրչարչարել նոցա, ոյժից վեր չրբանեցնել և չնեղել նրանց։ Նաւթատէրերը խոստացան կատարել։ Իսկ բանուորներին, որոնք բազմութեամբ ներկայացան Նորին Վեհափառութեան, պատուիրեց, որ նուիրեն իրանց անձը գործին. հեռու կենան շռայլութիւնից, ազատ օրերը նուիրեն իրանց ասուածպաշտութեան. ապա օրհնեց նոցա աշխատանքը, պարապմունքը և իրանց։

Երեկոյեան 7 ժամին Վեհափառը վերադարձաւ Բագու։

Իսկ Մ. ընկ. գրատունը այցելել էր դեռ կիւրակի օրը, և օբՀնելով նորա հիմնադրին, բարեհաճել էր ցանկութիւն յայտնել, որ Ռոստոմեանի պատկերը արժէր մեծ դիրքով ունենալ՝ եղած պատկերների մէջ. պ. Անտոնեան յայտնեց, որ արդէն Ընկերութիւնը վճռել է նորա կիսարձանը դնել։

Նոյն երեկոյեան պ. Դ. Ղազեան ներկայանալով Վեհափառին բաղդ ունեցաւ ներկայացնել մի նուէր, փայտի վերայ քանդակադործած մի ձեռագործ պատկեր, որը ներկայացնում է տեղւոյս կայարանը. այդ նուէրը տեխնիկայի կողմից էջմիածնայ թանգարանում կըբռնէ ուշադրութեան արժանաւոր տեղ։

Բագուի հասարակութիւնը, որ այնպէս ջերմ սիրով և ուրախութեամբ հիւրընկալեց իւր ծերունի Հայրապետին, նա և չըզլխէրը է զլանար և նիւթապէս այդ ապացուցանելու. և չը զլացաւ էլ։

Զորեքշաբթի Վեհափառը այցելեց Բաքուի Աղքատանոցն և շատ գոհ մնաց. մանաւանդ ուրախացաւ, տեսնելով, որ Բագուի ժողովուրդը արժանի է իւր հռչակին։ Ապա վրայ հասաւ երեկոյեան բաժանման տխուր րոպէն։ Պ. Գէորգ Լալայեանցի տնից, իւր իջևանել էր Վեհափառը, մինչ երկաթուղու կայարանը վառուած էին ջահեր, ճանապարհը այդպիսով լուսաւորուած էր սքանչելի կերպով. և հայկական զանգակի զողանջիւնի ազդեցութեան տակ, մարդ զգում էր, որ գտնուում է արտակարգ հոգեկան դրութեան մէջ։ Եկաւ երեկոյեան 8 ժամը յիշեալ տան առաջ ասեղ գցելու տեղ չկար, այս բառի բուն նշանակութեամբ։ Խայտաճամուկ ամբոխը բաղկացած զանազան ազգերից խռնուել էր այստեղ։ Փողոցի մէջ Վեհափառի համար նշանակուած պ. Թաղիեվի կառքի շուրջը պատել էին տեղոյս դպրոցների հայ աշակերտները—մեր ապագայ յոյսերը, իրանց համազգեստներով։

Ցանկարծ հասարակութեան ուշադրութիւնը լարուեց. միջանցքից լսվեց ներսի պատշգամբի վերայ «Հնչեսցեն լարք». երդում էր Կ. Միրզայի խումբը. քիչ յետոյ երևեցան 2 խաչաբարձ քահանաներն, ապա բոլորից շրջապատուած Նորին Վեհափառութիւնը. միանգամից խուժանը թնդացրեց օդը «կեցցէ» աղաղակներով։ Կառքը շարժուեց. նորան հետևեցին բազմութիւ-

կառքեր. իսկ հետիոտս գնացող ամբոխին թիւ չկար։ Կայարանում արտաքոյ կարգի գնացքը 15 րոպէի չափ ուշացաւ. այդ միջոցում Վեհափառը բարեհաճեց իւր գոհունակութիւնը յայտնել բոլոր առաջնակարգ ներկայ գտնուողներին, բոլոր օտարազգիներին և բոլորին օրհնեց։ Յետոյ երբ յայտնեցին, որ գնացքը պատրաստ է, Վեհափառը բարձրացաւ տեղից։ Բոլորը հերթով մեծ պատկառանքով մօտեցան՝ Վեհափառի Ս. աջը համբուրելու։ Նորին Վեհափառութիւնը երիցս իւր աջը համբուրող նահանգապետին օրհնեց, ասելով «շատ լաւ տպաւորութիւններ տարայ ձեր կարգադրութիւնների, ձեր և ձեր ստորադրեալների նկատմամբ, շնորհակալ եմ». այս խօսքերից յետոյ Վեհափառը բարեհաճեց համբուրել նորա ճակատը։ Ապա օրհնեց քաղաքագլխին, գովելով «արժանաւոր քաղաքը, արժանաւոր ժողովուրդը և արժանաւոր քաղաքագլուխը»։ Երբ Վեհափառը երևեցաւ երկաթուղոյ տափարակում, խուռն ամբոխից լսուեց «կեցցէ եկեղեցին, կեցցէ իւր գլուխը, կեցցէ Վեհափառ Մակար Ա.» օդը թնդաց աղաղակներից։ Վեհափառը վագոնի պատուհանից «պահպանիչով» և «Հայր մերով» վերջացրեց իւր օրհնանքը։ Ժողովրդի աղաղակը խլացրեց ամեն ինչ. գնացքը շարժուեց . . .

Հոկտ. 27ին առաւօտեան 9½ ժամին կաթողիկոսական արտաքոյ կարգի գնացքը կանգ առաւ Գանձակի կայարանում, ուր գումարուած էին բազմաթիւ քաղաքացիներ, որոնք տեսնելով ցանկացեալ պատկառելի Հիւրին «կեցցէներով» թնդացրին օդը։ Կայարանում սպասում էին Կաթողիկոսին Գանձակի նահանգապետ իշխ. Նակաշիձէն՝ բարձր պաշտօնեաների հետ միասին, և քաղաքի պատգամաւորները։ Վեհափառ Տէրը հրաւիրեց իւր շոգեկառքը իշխ. Նակաշիձէին և ընդունելութիւնը տևեց ¼ ժամ։ Այնուհետև, իջնելով դահլիճը, Կաթողիկոսը ընդունեց իշխանաւորներին և բարեհաճեց նստել կառքը, որ լծուած էր երեք զոյգ ձիերով։ Կառքերի մի երկար շարք, ուղեկցութեամբ կօզակների զօրախմբի և դրօշակիր ձիաւորների, հանդիսաւոր կերպով ընթացաւ դէպի քաղաք, ուր բոլոր մահմեդական աղգաբնակութիւնը շարքով կանգնած մինչև կամուրջը ակնածութեամբ ողջունում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Կամուրջի վերայ Վեհափառը իջաւ կառքից և ամպ-

հովանու տակ, որ տանում էին ամենապատուաւոր քաղաքացիք, ուղղուեցաւ դէպի մայր եկեղեցին։ Տեսարանը փառահեղ էր, ոստիկանութիւնը հազիւ կարողանում էր պահել ամբոխին։ Ամբողջ քաղաքը ոտքի վերայ էր, տները զարդարած էին դրօշակներով. պատշգամներից, ուր կանգնած էին կանայք, կապերտներ էին կախուած. ժողովրդի բերկրալի տրամադրութիւնը սահման չունէր։ Նաբաթեան եղբայրները արժանացան իրանց տան մէջ ընդունել Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Նաբաթեաններին շքեղ կերպով զարդարել էին իրանց տունը թէ ներքուստ և թէ արտաքուստ, 100 հոգու հացկերոյթ էին պատրաստել և ցանկութիւն յայտնել Ս. Էջմիածնայ Աթոռին նշանաւոր գումար նուիրելու։ Հայ դպրոցների աշակերտներն և աշակերտուհիքը ժողովուած Նաբաթեանի տան գաւթում, Վեհափառի մօտենալուն պէս, հնչեցրին հայկական երգեր։ Կաթողիկոսը երկար ժամանակ մնաց նոցա մէջ, հարցուփորձ անելով աշակերտներից և ուսուցիչներից և տպա ջերմ օրհնեց նոցա։ Վեհափառը այցելեց քաղաքի հայ եկեղեցիները։ Նաբաթեանների դահլիճը լի էր մահմեդական հոգևորականութեամբ և բազմաթիւ աստիճանաւորներով ու քաղաքացիներով, որոնց ընդունեց և օրհնեց Վեհափառը։

Ճաշի ժամանակ Պ. Նահանգապետ իշխան Նակաշիձէն զեկուցեց, որ իբրև նահանգապետ պարտք է համարում Նորին Օծութեան առաջ վկայելու, որ իւր նահանգի հայերն արժանի են Նորին Վեհափառութեան առանձին օրհնութեան, որովհետև նոքա աշխատասէր են, արդարութեամբ և սիրով հատուցանում են իրանց հարկն և անձնուէր հաւատարմութեամբ առ գահն ռուսաստանի փայլում են։ Նորին Օծութիւնն այդ յայտարարութեան ուրիշ յայտնեց իւր առանձին գոհունակութիւնն և տուեց իւր օրհնութիւնը։ Զկնի ճաշի փոքր ինչ հանգստանալից յետ ժամը 4½ կէսին վեհափառը թողեց Գանձակն։ Ժողովուրդն նոյն ոգևորութեամբ և ջերմեռանդութեամբ, վայելելով Նորին Օծութեան օրհնութիւնն, ուղեկցեց իւր Հայրապետին մինչև կայարանը, ուր արդէն սպասում էր Նորին Օծութեան Նահանգապետ իշխան Նակաշիձէն։ Նոյն օրը ժամը 8-ին Նորին Օծութեան առանձին գնացքը հասաւ Աղստաֆա, ուր և որոշած էր գիշերել. այստեղ դիմաւորեցին Նորին Օծութեան Խա-

զախու եկեղեցական դասն, ժողովրդականաց հետ և Խազախի պ. գաւառապետ Իշխան Թարխանովը։ Նորին Վեհափառութիւնը երկաթուղու կայարանից գնաց փոստայի իջևանն, որ զարդարուած էր և յարմարեցրած Նորին Սրբութեան ընդունելութեան համար։ 28-ին առաւօտեան 9 ժամին Վեհափառ Հայրապետն օրհնելով ներկայ եղող եկեղեցականաց և ժողովրդեան, ուղևորեցաւ ուղեկցութեամբ պ. գաւառապետի և բազմաթիւ հեծեալների դէպի Քարվանսարայ, ուր պատրաստած էր ճաշ։ Այստեղից ուղևորեցաւ դէպի Դիլիջան, որ նշանակած էր գիշերելու տեղի։ Ճանապարհին ամենուրեք գիւղական բնակիչք իրանց եկեղեցականներով սպասում էին Նորին Օծութեան օրհնութիւնը ստանալ։—Երեկոյեան ժամը հնգին Վեհափառն եկեղեցու զանգահարութեամբ մտաւ Դիլիջան գիւղն, ուր իջևանեց Ճարտարապետ Պ. Եարալեանի տանը։ Այստեղ դիմաւորեցին Նորին Օծութեան Երևանի թեմական առաջնորդ Սուքիաս Եվ Աղեքսանդրապօլու յաջորդ Գրիգորիս սրբազան եպիսկոպոսները։ Տանտէր պ. Եարալեանցն, որ զարդարել էր իւր տունը վայելուչ կերպով, լուսաւորելով այն գոյնզգոյն լապտերներով, արժանացաւ Վեհափառութեան շնորհակալութեան և պարգևաբաշխութեան։ Այստեղ ներկայացաւ Նորին Օծութեան և տեղական սապեօրնի գնդի հրամանատար գնդապետ պ. Էդիգարովն, որ և արժանացաւ հրաւիրուելու ընթրքի։

Միւս օր 29-ին առաւօտեան 9 ժամին մինչև Նորին Օծութեան կառք մտնելը Դիլիջանի դպրոցի աշակերտք հաւաքված պ. Եարալեանցի տան բակում երգում էին ազգային երգեր։ Նորին Օծութիւնը կանգնած պատշգամբում, շրջապատուած իւր ուղեկիցներով ու հիւրասիրող ժողովրդականներով, լսում էր երգերը. ապա պահպանիչով օրհնեց ամենքին։ Այս միջոցին մի լուսանկար հանեց այն հանդիսաւոր տեսարանի պատկերը։ Ժամն 9½ Վեհափառի կառքը շարժեցաւ դէպի Սիմենովկա, ուր արդէն ոպասում էին Նորին Օծութեան Երևանայ փոստային վարչութեան կառավարիչ պ. Քնքուշեանցն և Նոր—Բայազիտի գաւառապետ պ. Սիմենենկոն իւր օգնական Մելիք—Ղափլանեանի և բազմաթիւ ձիաւորների ու Երևանի նահանգապետից նշանակած առանձին պատիճանաւորի հետ։ Սիմենովկից դէպի Ելենովկա ճանապարհին Սևանայ լճի ափին Նորին

Օծութեան տեղասում էր Սևանայ վանքի միաբանութիւնն, որ ստացաւ Վեհափառ Հօր օրհնութիւնը։ Ելենովկայում Նորին սրբութիւնը ընդունեց հացկերոյթն, որ պատրաստել էր Նոր Բայազէտի հայ հասարակութիւնը։ Այստեղ պ. Սիմենենկօն յայտնեց Նորին Օծութեան իւր շնորհակալութիւնը Նոր Բայազէտի հայ եկեղեցականներից, որոնք այս տարի շատ նպաստել էին զինուորագրութեան գործում, իրան գրեթէ անելիք չթողնելով։ Նորին Օծութիւնը նկատեց, որ եթէ անցեալ տարի ևս դիմած լինէին եկեղեցականաց օգնութեան, բնաւ դժուարութիւն կրած չէին լինել այդ գործի համար։ Նոյնպիսի շնորհակալութիւն յայտնեց Նորին Օծութեան Երևանում նահանգապետի ներկայութեամբ և Երևանի գաւառապետն ու լսեց Նորին Սրբութիւնից նոյն նկատողութիւնը։

Ելենովկից Նորին Օծութիւնն, շրջապատուած բազմաթիւ հեծեալներով, որոնց վերայ աւելացան և Քրդեր, անցնելով Ախտայի իջևանը երեկոյեան 5 ժամին ժամանեց Սուխոյ Ֆանտան, ուր որոշված էր գիշերել։ Միւս օր հոկտեմբերի 30ին առաւօտեան 9ին վարձատրելով Սիմենենկօ գաւառապետին և այլոց օգնևորեցաւ Նորին Օծութիւնն յէյլար, ուր ներկայացան Նորին Վեհափառութեան Կոտայք գաւառի եկեղեցականք և ժողովրդականք աղուհացով, որոնց օրհնելով շարունակեց իւր ճանապարհը դէպի Երևան։ Քանաքեռ գիւղում Նորին Օծութեան ընդ առաջ եկան Ս. Էջմիածնի Սինօդի անդամք և երկու միաբան վարդապետք։ Արդէն այստեղ հաւաքված էին ժողովրդականք Երևանից և մերձակայ գեղերից։ Վեհափառի կառքը կանգ առաւ, դիմաւորողք մերձեցան Նորին Օծութեան աջին և ճանապարհորդութիւնը շարունակեցաւ։ Երևան չհասած հանդիպեցան Վեհափառին Երևանի քաղաքագլուխն իրաւասուներով, որ շնորհաւորելով Նորին Օծութեան բարեյաջող վերադարձը մատոյց աղուհաց, նոյնպէս և Երևանի ոստիկանապետն և գաւառապետը բազմաթիւ կողակներով և ձիաւորներով, ու բազմութիւն ժողովրդականաց։ Վեհափառն այստեղ օրհնելով բոլոր հանդիպողներին և յայտնելով իւր ուրախութիւնն, որ ամենքին ողջ և առողջ է տեսնում, ճիշդ 12 ժամին հանդիսաւոր կերպով, զանգահարութեամբ և խուռն ժողովրդեան ուղեկցութեամբ մուտ գործեց Երևան և ուղղակի գնաց դէպի

մայր եկեղեցին Ս. Սարգիս, որոյ արտաքին դրան առաջ մոնելով ամպհովանու տակ հետիոտս գնաց Ս. եկեղեցին, ուր իւր աղօթքը կատարելից յետ եկեղեցական դասի ուղեկցութեամբ, խաչով և խաչվառով ու եկեղեցական երգեցողութեամբ գնաց առաջնորդարան։ Այստեղ Նորին Օծութեան սպասումէր պ. Նահանգապետն բարձրաստիճան պաշտօնեաներով, որոնց հետ կարճ ժամանակ խօսակցելուց յետ քաշվեցաւ իւր առանձնասենեակը հանգստանալու։ Երեկոյեան բոլոր առաջնորդարանն ու եկեղեցու բակը գեղեցիկ կերպով լուսաւորված էր մոմերով և գոյնզգոյն լապտերներով, աչքի էր ընկնում մանաւանդ գեղեցիկ վենդիլը։ Այս ճրագալոյցը երեք գիշեր, քանի Նորին Օծութիւնը Երևանումն էր, շարունակուում էր։ Խուռն բազմութիւն ժողովրդականաց խռնված էր եկեղեցու բակում և Նորին Օծութեան ամեն երևելիս պատուհանում թնդացնում էր օդը «կեցցէ»ով։ Երգեցիկ խումբն էլ շարունակ երգում էր ազգային երգեր։

31-ին առաւօտեան 8—10 ժամը ընդունեց Երևանի քաղաքի եկեղեցականաց և ժողովրդականաց, որոնց իւր խրատներով և օրհնութեամբ մխիթարեց։ Իսկ 10-ից յետոյ, բարեհաճեցաւ բաղդաւորել թեմական դպրոցն իւր այցելութեամբ, դպրոցն որ իւր յիսնամեայ գոյութեան ժամանակ առաջին անգամ իւր մէջ բաղդ ունեցաւ տեսնելու Հայոց Հայրապետին։ Դպրանոցի տեսուչ պ. բժիշկ Մնացական Յարութիւնեանցն կարճ, աղդու և զգայուն ճառով յետ ներկայացրեց Նորին Օծութեան դպրոցի համառօտ ուսումնական տարեկան հաշիւը, իսկ հոգաբարձութեան կողմից հոգաբարձու Պ. Կ. Դաղամեանցը կարդաց հետևեալ ճառը.

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

Արարատեանս թեմի, Հայոց Հայրապետի անընդմիջական հովուութեանը վերապահուած այս հարազատ վիճակի թեմական հոգևոր դպրանոցս իւր 52 ամեայ գոյութեան ընթացքում երբէք արժանացած չէ ոչ մի Հայրապետի շնորհաբեր այցելութեանը։ Այսօր թեմական դպրանոցս անհուն երջանկութեան մէջ է զգում իրան, որ իւր անշուք յարկի տակ բաղդաւորվում է իւր Բարձրագոյն Իշխանաւորի քաղցր ուշադրութեանը ներկայանալու ամբողջապէս՝ իւր արտաքին և ներքին կազմութեամբ։

Դպրանոցս անհուն երջանիկ է զգում իրան, որովհետև լրութեանս Հա-

յոց Վեհագոյն Հօրդ շնորհաբեր այցելութեան, Աստուածարեալ Հայրապետիդ դպրանոցիս վիճակով առանձնապէս հետաքրքրուելու մէջ իւր ապագայ բարօրութեան արշալոյսն է տեսնում և աւելին՝ իւր կէս դարուց ի վեր սպասած յոյսերի կատարումն է նախաճաշակում։

Որպէս զի անջնջելի մնայ Թուականիս Հոկտեմբերի 31ը դպրանոցիս ապագայ կեանքի մէջ, Հոգաբարձութիւնս տնօրինեց յանուն Վեհափառ Հայրապետիդ երեք որդեգիր պահել այսուհետև։ Այսօր անբաւ ուրախութեամբ լցուած՝ դպրանոցս իւր ամբողջութեամբ՝ հոգաբարձուներով, տեսչով, ուսուցիչներով և աշակերտներով՝ խոնարհաբար ներկայացնում է իւր Բարձրագոյն Խնամատարին—Աստուածարեալ Վեհափառութեանդ—նախ՝ «Ցիսնամեայ պատմութիւնը» սկսած 1837 թուից մինչև 1887 թ. տպագիր, երկրորդ՝ անցեալ 1887—88 թուականի մի ամեայ ելից և մտից համառօտ հաշիւը, երրորդ՝ ներկայ թուականիս տնտեսական և ուսումնական տեղեկագրերը—հետևապէս այս ամենով իւր ամբողջ կացութեան ստուգատիպ պատկերը։

Վեհափառ Օծութեանդ շնորհաբեր այցելութեամբ անշուշտ բարեփոխուելու է դպրանոցիդ վիճակը։ Նոր օր, նոր արև պիտի ճառագայթի այսուհետև Արարատեանս թեմի դպրանոցիս համար ի բարոյական վերածնութիւն ընդարձակ այս վիճակի բիւրաւոր Հայերի, ի պայծառութիւն Լուսաւորչահիմն մեր սուրբ եկեղեցւոյ և ի մխիթարութիւն, ի սփոփումն ամբողջ ազգիս Վեհագոյն Հօրդ օրտի և հոգւոյ։

Այս ճառի հետ ինչպէս յայտնած է նորա մէջ առանձին սկուտղի վերայ երկու հոգաբարձուք պատիւ ունեցան յանձնելու Նորին Օծութեան դպրոցի յիսնամեայ տպագրած պատմութիւնը, գեղեցիկ թաւշեայ կազմով և դպրոցի տնտեսական հաշիւը։ Նորին Օծութիւնը, ընդունելով դպրոցի պատմութիւնն ասաց, որ ինքը իրան մխիթարուած է տեսնում դպրոցի ներկայ վիճակով, որովհետև նա տեսել էր այս դպրոցի աշակերտներին մի խրճթում յատակի վերայ նստած, երբ իբրև քննիչ ուղարկած էր իշխանութեան կողմից իւր վարդապետութեան օրերին։ Ապա առաջ եկաւ վեցերորդ դասատան աշակերտ Գէորգ Բատիկեանց և բաղդ ունեցաւ կարդալու իւր գրած հետևեալ ճառն.

ՓԱՀԱՆԱՑԱՊԵ՛Տ ՍՈՒՐԲ

ԱՐԹՈՒՆ ՀՈՎՈՒԱՊԵՏ

Բաստ երջանիկ, դիպումն հրաշալի՝ ըստ Սիոնի մանկանց յընտրեալ նուագուցն՝ այսօր և մեք ձայնեցաք մերձիլ ի տես և յողջոյն Արթուն Հովուապետիդ, չբաւին բերանք մեր թոթովել զբերկրութիւն և զհրճուանս

մերոց սրտից։ Ո՜յ՛, արդարև զի՞նչ քաղցր և ըղձալի քան զայս ժամ նուիրական, յորում տեսանելիք առ մեզ զԱստուածարեալ Հայրապետն Հայաստան հօտիս։ Քանի՞ն բախտաւոր է մերս մարդարան հոգևոր շնորհաց, զի փառաւորի այսօր այցելութեամբ կենսատուին իւրոյ՝ ի բաղմաթիւ փափագելոց, ի սակաւուցն շարի ունելով զպարծանս արժանանալոյ այնմ։ Ո՞չ ապաքէն և մեք առաջին և բարեբաստիկն եմք ի ժառանգաւորդաց՝ ի կեանս կիսադարեան գոյութեան հաստատութեանս այսորիկ, օրհնութեան Աստուածառաք Հօրդ արժանացեալք։ Եւ մեզ ուրեմն յիրաւի պանծալ կայ ընդ գործս արժանեաց Օծեալ Պեսին մերոյ, որ փոյթ յանձին ունի լցուցանել զպէտս մեր զհոգևոր և զբարոյական և անդուլ գուն գործէ ի ճըգունս շահաւէտս պայծառացուցանել և բարգաւաճել զազգ և զեկեղեցի տանս Թորգոմեան։

Օ՜ն անդր փութասցուք, երջանիկքդ իմ բախտակիցք, վերառաքել ըզպաղատանս մեր մաղթանաց առ Հաստիչն Տիեզերաց ձգել երկարել զթել կենաց Վեհասքիճան Քահանայապետիս մերոյ անսպիթաք ընդ երկար ամս յաստպարէզ փառաւոր ի վերածնութիւն նախնի փառաց Մօրն մերոյ՝ Քրիստոսահիմն Տաճարիս Սրբոյ Էջմիածնի։ և որոց ի Նա կան և մնան ակնկառոյց։ Թո՛ղ ուրեմն յաւերժասցին գործք սիր պ.նծք Քաջարթուն Հովուապետիդ մերոյ յանմահ անուն և յիշատակ անմոռանալի ի միտս և ի սիրտ սերնդոց ի սերունդ Հայաստան ազին և ընդ դարս դարս ժամանակաց։

Եւ Դո՛ւ, Վեհափառ Տէր, հայրագորով քաղցրութեամբ՝ յորդիս առատացո՛ զշնորհս Հոգւոյն սրբոյ քոյով ցանկալի օրհնութեամբ զի զօրացեալք ի նոյն և մեք եղիցուք արժանաւոր ժառանգք Հայաստանեայց Ս։ Եկեղեցւոյ ի փառս անուան Մեծի Խնամակալիդ և ի մխիթարութիւն համօրէն հօտիդ։ և հաճեաց բովանդակել զիղձ մեր և զուրախութիւն ի համբոյր Աջոյդ Օծելոյ։

Ապա Նորին Օծութիւնն իւրաքանչիւր ուսուցչի արժանացնելով իւր ոտքն համբուրելու հորցուփորձ տրաւ նոցա ուսման և հայրենեաց մասին և ամենքին էլ օրհնելով շրջեցաւ բոլոր դասարաններն ու սենեակները դպրանոցի։ և 12 ժամին վերադարձաւ առաջնորդարան։ ուղեկցած հոգաբարձուներով, ուսուցիչներով ու երգեցիկ խմբով։

Նոյն օր զկնի ճաշին 4 ժամին Նորին Օծութեան ներկայացաւ Քաղաքագլուխ Պ. Բ. Գեղամեանց և հասարակութեան կողմից ընտրեալ երկու անձինք Պ. Պ. Ե. Դեկարխանեանց և Ե. Ղորղանեանց։ խնդրելու, որ միւս օր Նորին Օծութիւն բարեհաճի ընդունելու քաղաքի Հայ հասարակութեան կողմից պատրաստած հացկերոյթն։ որոյ մասին Վեհափառն հայրական սիրով իւր յօժարութիւնը յայտնեց։ Միւս օր 1 ին նոյեմբերի

Նորին Օծութիւնը բարեհաճեցաւ ընդունել 10 ժամին գենեռալ լէյտենանտ Պ. Ս. Քիշմիշեանցին և տեղական զօրաց գնդապետ Կրիվօշէեվին իւր ընտանեօք։ Իսկ 12 ժամին այցելելով Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին բարեհաճեցաւ երթալ հայ օրիորդաց Ս. Գայիանեան դպրոցն, ուր հաւաքուածէին և Նորքայ երկսեռ դպրոցաց աշակերտք և աշակերտուհիք։ Այստեղ Նորին Օծութիւնն երկար մնալով, հարցուփորձ արաւ աշակերտուհեաց, նոցա յառաջադիմութեան հասու լինելու համար, հարցուփորձ և զանազան նկատողութիւններ արաւ վարժուհեաց և ամենքին իւրեանց պաշտօնի մէջ աչալուրջ գտնելով օրհնեց ամենքին։ Գայիանեան դպրոցի տեսուչ աւագ քահանայ հայր Մելեանցը բանաւոր կերպով սրտառուչ խօսքերով յայտնեց դպրոցի վարչութեան կողմից շնորհակալութիւն, որ Նորին Օծութիւնը բաղդաւորեց դպրոցն իւր բարձր այցելութեամբ ու արաւ դպրոցի համառօտ պատմութիւնը յայտնելով, որ ի պատիւ այդ օրուան բաղդաւորութեան դպրոցը պահելու է յանուն Նորին Օծութեան մի տանուհի. ապա ի դիմաց Ս. Գայիանեան օրիորդաց դպրոցի Պ. Ց. Ցովհաննիսեանը կարդաց հետևեալ ճառը.

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ

Քանի՞ վեհ արդեօք ժամ է մեզ ի սերկեան աւուր զի մատաղերամ մանկաթին Հայաստանեայց շուրջ բոլորեալ զԳահոյիւքդ յերախտագիտական ըզգացմունս տենչայ յօրհներգս գեղգեղել զգալուստ մեծի Հայրապետիդ յայս նուիրական Տաճար գիտութեան։

Վեհափառ Տէր, եթէ ներեսցի համարձակեցայց ասել՝ բովանդակն պատմութիւն հնոցն մերոց նախնեաց, թո՛ղ զփառաւորագոյն ինչ ժամանակս, զաղետից և եթ տայ յիշատակս. զի երբեմն ահեղագոչն Որմիզդ սաստ ի կիր արկանէր զարեան ճապաղիս ի Հայաստան աշխարհի գործել, երբեմն գարշ Արաբացին երդմնի լեալ արշաւէր ի սուր սուսերի մաշել զորեարս Հայկազեանս գրոհի. յայսգունակ և բազմադիմի թշուառութիւնք հասանէին ի վերայ, իսկ Հայն յուսապատար դիմէր յօգնականութիւն հովուաց իւրոց և ոչ ի դերև էլանէր ակնկալութիւն նորա, զի հովիւք իրաւարարք հայրենեաց ամաքէին զսպառնալիս դառն օրհասին։

Դարձեալ՝ ոչինչ է զանխուլ ի Ձերդ Օծութենէ. զի ի ժամանակս ժամանակս ի մէջ գժոխմբեր բռնութեանց մեծագործ Հայրապետք և զլուսաւորութենէ մատաց հայորերոյն յարիւն և ի քիրան ոքնէին, որով ի դբրանց անդնդոց կորստեան ազատէին։ Զայս մեզ պատմութիւն ուսուցանէ, որ է ուսուցիչ ճշմարտութեան։

Եւ ո՞ւր եղեն յաւիտենականն երբեմն կարծեցեալ ազինք, որ անգոսնեալ զլուսաւորութիւն մտացն զհետ եղեն մոլար նախանձու աշխարհակալութեան և մոլեալ եդին զյոյս իւրեանց ի մթերս զինուց և եթ և թագաւորեաց ի նոսա ապականութիւն բարուց։

Սակայն հզօր Աղ Բարձրելոյն ի թիկունս հասանէր Թորգոմեան տանս ի փրկել զնա ի ձեռաց մահու և աղջամղջի տգիտութեան և առաքելաշնորհ Հայրապետի յերկունս ծնանէին զայսպիսի տաճարս ուրեք ուրեք յաշխարհս աշխարհս ուր պանդխտեալք եղեն մերազնեայք։

Եւ արդ, յոլորտս երկրի ցրուեալ ժողովուրդ Հայոց զաչս սեւեռեալ ի սուրբ Էջմիածինս որ է խարիսխ յուսոյ և հովանի տառապեալ ժողովրդեանն և ի Գահակալդ Նորին, որ խանդակաթ ի սէր զցայգ և զցերեկ անդուլ աքնիք ընդ յառաջադիմութիւն մեր, ակն ունի զի անտի ի Զէնջ տարածեսցին լուսաւէտ ճաճանչք արփւոյն ուսման։

Եկայք, ուրեմն, ո՞վ սանուհիք, որդեգրեալք մեծէ Բարերարէս խինդ ի դէմս ասնեսցուք զայս օր յաւերժական յիշատակաց արժանի, զի արժանընտիր Ցաղորդ մեծին Գրիգորի և Սահակայ պարթևին յայց ելանէ մեզ, որոյ ընդ խնամովք ջամբիք կաթամբ ուսման։ Եկայք մանկական բերանով ձերով հայցել ի վերին Զօրութենէ երկարել զթել կենաց Վեհափառ Ցեառնս զամս ձիգս, որոյ ընդ հովանեաւ մարթասցուք զգիտութեան ճաշակել զհամեղ պտուղս և զբարոյիցն կրթութեան։

Ընկա՛լ, ուրեմն, ընկա՛լ, Վեհափառ Տէր, զայս զգացմունս քաղցր երախտագիտութեան մանկուցն ի խորոց սրտից սփռեալ առաջի մեծի Բարերարիդ։ Եւ զի՞ բարի կամ զի՞ վայելուչ Հօրդ սիրելւոյ որդւոց սիրելեաց հանդիպումն այսպիսի։

Օրհնեա՛ Քոյով Հայրապետական օրհնութեամբ զվաստակս ձեռաց մերոց ի բանաւոր անդաստանիս այսմիկ զի սերմն արկեալ ի սմա ի վեր աճեսցի և տունկք բանաւոր դեռաբողբոջ պարտիզիդ փթթեսցին ի ծաղիկս և տացցեն զպտուղս հարիւրաւորն թիւ ի քաղցրացուցանել զքիմս Ձեր և ի պայծառութիւն Հայոց ազգի և յուրախութիւն բազմավաստակ Հայրապետիդ։

Իսկ Նորքայ դպրոցների կողմից պ. Վ. Ցակովբեանը կարդաց եւս մի սրտառուչ ճառ։

Զկնի կէս աւուր երկու ժամին փոքր ինչ պակաս Պ. Քաղաքագլուխն և վերոյիշեալ երկու ընտրեալ անձինք գալով Ս. Գայիանեան դպրոց յայտնեցին, որ բոլոր հանդիսականք հաւաքված են և սպասում են ճաշի Նորին Օծութեան։ Վեհափառը օրհնելով դպրոցներն իրենց բոլոր կազմակերպութեամբ և աշակերտների երգեցողութեամբ նստաւ կառքն իւր ուղեկից Եպիսկոպոսներով և այլ եկեղեցականներով ու գնաց դէպի Պ. Բ. Եղիազարեանցի տունն, ուր պատրաստուած էր քաղաքի

Հայ հասարակութեան կողմից հացկերոյթ։ Տան դրան մօտ կանգնած էին համքարներն իրանց դրօշակներով և խուռն բազմութիւն ժողովրդոց, որոնք «կեցցէ»ներով հանդիպեցան Նորին Օծութեան- իսկ զինուորական երաժշտական խումբը ածեց Հայկական երգերից կազմած մարշը։ Հանդիսականք իջնելով ներքև պատուով և խորին յարգանօք Նորին Օծութեան բարձրացրին վերին յարկի դահլիճն, ուր հանդիպեցան Նորին Վեհափառութեան պ. Նահանդապետն իւր պաշտօնեաներով, քաղաքի Հայ հասարակութեան ներկայացուցիչք և մահմետական իշխանաւորք։ Ճաշը շատ ճոխ էր և շնորհիւ կարգաւորողների կանոնաւոր։ Նորին Օծութեան իւրաքանչիւր կերակուր մատուցանում էր, ըստ նախնի սովորութեան, կարգապրիչներից մէկը։ Ճաշի ժամանակ Նորին Օծութիւնը բաժակ առաջարկեց Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր և Նորա ընտանեաց կենաց, որ ընդունուեցաւ անընդհատ «կեցցէ»ով, և այդ միջոցին երաժշտական խումբը ածեց «Տէր կեցո զկայսր» երգը։ Ապա Պ. Նահանդապետն առաջարկեց Նորին Օծութեան կենաց թաստն, որ նոյնպէս կեցցէներով դատարկուեցաւ։ Այս միջոցին Պ. Յ. Ղորղանեանցը սրտառուչ և զգածուած կերպով յայտնեց Նորին Օծութեան քաղաքի Հայ հասարակութեան կողմից ուրախութիւն Նորա յաջող վերադարձի մասին ի Ս. Աթոռն և շնորհակալութիւն, որ չնայելով իւր ծերութեան հասակին յանձն առաւ ծանր ճանապարհորդութիւնը երթալու Թիֆլիզ և ներկայանալով Նորին Մեծութեան յայտնելու Նորան իւր հօտի հաւատարիմ հպատակութեան զգացումները։ Նորին Օծութիւնը պատասխանելով յայտնեց ուրախութիւն, որ իրան էր վիճակուել այդ բաղդն և ինքը կարողացել էր այդ քաղցր պարտաւորութիւնը կատարել, ընդ նմին յայտնելով Իւր շնորհակալիքն Երևանի Հայ հասարակութեան իրանց որդիական սիրոյ համար, օրհնեց նոցա աղ ու հացն և մաղթելով նոցա յաջողութիւն և հաստատութիւն իրանց մաքուր զգացմանց մէջ դէպի Ս. Եկեղեցին և Սուրբ Աթոռը, վեր կացաւ սեղանից։ 4 ժամին Նորին Օծութիւնը կառք նստելով, առաջնորդութեամբ քաղաքագլխի, գաւառապետի և խուռն բազմութեան ուղեկցութեամբ վերադարձաւ առաջնորդարան։

Երեկոյեան 5 ժամին Նորին Օծութիւնը հրամայեց կարգա-

դրութիւն անել միւս օրուան դարձի համար։ Ա. Աթոռն։

Անոյշ 2ին կէսօրին Ս. Սարգիս եկեղեցու բակը լի էր խուռն բազմութեամբ ամեն ազգերի։ Նահանգապետն եկաւ իւր սատիճանաւորներով հրաժարական ողջոյն տալու։ 12 ժամին Նորին Օծութիւնը գնաց եկեղեցի իւր աղօթքն կատարելու և ապա դուրս գալով նստաւ կառքն, որին հետևեցին տեղական առաջնորդ Սուքիաս Եպիսկոպոսը, քաղաքապետին իրաւասուներով, Գաւառապետ Պ. Սիլիշն, պօստատի սատիճանաւոր Քնքուշեանցը, սատիկանապետն ու բազմաթիւ պատուաւոր անձինք կառքերով և ձիերով։ Երևանի այգիների ծայրամ Նորին Օծութիւն օրհնելով ամենքին արձակեց։ բացի Սուքիաս Սրբազան Եպիսկոպոսից, պ. գաւառապետից և Քնքուշեանից, որոնք մինչև Էջմիածին ուղեկից եղան։ Փարաքեսոր գիւղում հանդիպեցան Նորին Օծութեան հայ եկեղեցականք զգեստաւորուած և խաչ ու խաչվառով ու բազմաթիւ աշխարհականք, որոց Նորին Օծութիւնը, կառքը կանգնեցնելով, օրհնեց և շարունակեց իւր ճանապարհը։ Երբ Վաղարշապատին մօտենում էր Նորին Օծութեան կառքը, դիմաւորեցին Նորան Էջմիածնայ Գաւառապետի օգնականն Պ. Բագրատ Հասան-Զալալեանցն բազմաթիւ կօզակներով, Վաղարշապատի քահանայք, տանուտէրն ու բազմաթիւ պատուաւոր քաղաքացիք, որոնց ուղեկցութեամբ Նորին Օծութիւնը մօտ 2 ժամին զկնի կեսաւուր մուտ գործեց Վաղարշապատ։ Վանքի արտաքին դրան մօտ սպասում էին Նորին Օծութեան բոլոր միաբանութիւնը շուրջառներով, ճեմարանի տեսուչն, ուսուցիչք, աշակերտք, Սինոդի պաշտօնեայք և խուռն բազմութիւն ժողովրդեան։

Նորին Օծութիւնը իջնելով կառքից մուտ ամպհովանու տակ և եկեղեցական դասն ըստ ծիսի Հայաստանեայցս եկեղեցու շարական երգելով և խաչով խաչուառով ու խնկարկութեամբ առաջնորդեց Նորին Օծութեան դէպի Մայր եկեղեցին, ուր Նորին Սրբութիւնը իջման սեղանի առաջ կատարելով իւր աղօթքն, նոյն կարգով վերադարձաւ վեհարան։ Այստեղ պատրաստած էր սեղան Նորին Օծութեան Երևանից ուղեկցողների համար, որոնց հետ ճաշը վայելելից յետ, Նորին Օծութիւնը նրանց հրաւիրեց դահլիճն և ամենքին պարգևաբաշխելով և օրհնելով արձակեց

ու ինքը մնաւ իւր առաձնաբենեակը հագստանալու։

Ամսոյս 6 ին բարեհաճեցաւ Վեհափառ Հայրն ընդունել միաբանութեան առաւօտեան 8 ժամին, յայտնեց իւր գոհունակութիւնն բոլոր միաբանութեան, և առանձին շնորհակալութիւն գեր. Երեմիա Եպիսկոպոսին, որ ի բացակայութեան Նորին Օծութեան վարում էր տեղապահի պաշտօն։

Նորին Օծութիւնը հաղորդեց միաբանութեան համառօտ կերպով իւր տեսակցութիւնքը Նոցին մեծութեանց և այլոց հետ, ինչպէս և իւր այցելութիւնքն Բաքու և Գանձակ քաղաքներին։ Նոյն օր ընդունեց Վեհափառ Հայրն և Ճեմարանի տեսչին, ուսուցչաց, վերակացուաց և աշակերտաց, որոնց օրհնեց, ցանկալով նրանց յառաջատիմութիւն իրանց ուսման մէջ։ Աշակերտներից մէկը Ց. Խաչումեան ի դիմաց Ճեմարանի սաների հետևեալ ճառով շնորհաւորեց Նորին Օծութեան բարեյաջող դարձն-

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՏԷ՛Ր

Օրհնեալ Գալուստ քո, Քահանայապետ Սուրբ, և օրհնեսցին քեզ որդիք քո յոտին քում՝։ Երանի՜ աչաց մերոց, զի արժանի եղեն վերստին շնորհաբեր Տեսութեան Օծութեանդ Սրբոյ։ երանի՜ է մեզ զի զկնի յիսնօրեայ որդիական խանգակաթ անձկանաց, արժանի արարեր զմեզ համբուրել դարձեալ Սուրբ զԱչ Քո և բաշխել զՀայրապետական օրհնութիւնդ։ Քանի՜ մաղթանս վերառաքեմք առ Ամենաբարձրեալն, զի դարձոյց ողջամբ զՎեհափառ Տէրդ մեր յԱթոռ քո, և ողորմութեամբ Նորին ի գլուխ հաներ, Հովիւդ քաջ, զայցելութիւն բարեպաշտ և հաւատարիմ հօտին քո։

Մի՛թէ հնար իցէ, Հայրապետ Սուրբ, զսպել զբաբախմունս սրտից և զզեղմունս եռանդագին զգացմանց մերոց, որ ի Ճշմարիտ և յաննենդ բերկրութենէն։ Տեսանեմք զհովուապետդ արթուն, զի յուրաստ լեալ զհանգիստ մարմնոյ՝ յար զպայծառութիւն Եկեղեցւոյս և Ազգիս և եթ խորհիս։

Առ ինչ զտարաշխարհականն հատեր ճանապարհ և զխստութիւնս ճանապարհացն յանձն առեր կամակար ի շնորհազարդ ալիս ծերութեան։ Առ դիւրութիւն և ի զբօսանս անձին։ Քաւ ի քէն։ Ցօրէ յայնմանէ, յորում ամբարձար յԱթոռ Սրբոյն Թարթուղիմեայ՝ ի բաց մերժեցեր զանձին շահ և զդիւրութիւն։ զհասարակացն և եթ ունելով ի մտի։ Զոգար, Հայրապետ՝ մեծ, չոգար առ ի պաշտպանել զպատիւ Եկեղեցւոյդ Սրբոյ։ Զոգար ի լինել հովանի զօրաւոր օգտից և շահուց Ազգիդ և Հայրենեաց։ Դո՜ւ յոյս մեր և ապաւէն Դո՜ւ ուրախութիւն և սփոփանք։ գո՜ւ պահապան հայրենի սրբազան աւանդից։ Դու խարիսխ ամրութեան և պաշտպան աննկուն Ազգութեան մերում՝, ի Քեզ հային աչք չարշարակիր որդւոցդ։ Ի Քեզ բովանդակին, Հայրապետ Հայոց, ի Քեզ ամենայն իղձք հոգեբուղխք և ակընկալութիւնք

մեր։ Դու վախճան գաղափարաց համայն հաւատարիմ հօտիդ։

Ներեսջիր, Աստուածարեալ Հովուապետ, արկանել առ ոտս Սրբոյ Հօրդ զհաւատիս որդիական խոնարհ զգացմանց մերոց և զճշմարիտ ցնծութիւն ընդ ողջամբ դարձ քո, և օրհնութիւնս բոլորել Ամենակարողին, զի շնորհեսցէ քեզ, յոգնավաստակ քահանայապետիդ, աւուրս երկայնս, անդորրս և արդիւնաւէտս ի պայծառութիւն ուղղափառ եկեղեցւոյ և ի շինութիւն Հայրենեաց։

Ապա երգեցիկ խումբը երգեց «Ով Տէր Աստուած, լուր՝ մեր բարբառ» երգն և համբուրելով Նորին Վեհափառութեան աջն ամենեքեան դուրս եկան։ Նոյն օր բաղդ ունեցան ներկայանալու Նորին Օծութեան և նորա օրհնութիւնը ստանալու թէ գիւղի եկեղեցականք թէ Սինոդի պաշտօնեայք, և թէ Վաղարշապատի այլ պաշտօնեայք ու պատուաւոր քաղաքացիք։

Իսկ ամսոյս 7 ին պաշտօնապէս ներկայացաւ Նորին Օծութեան Էջմիածնայ գլխաւոր պետ Պ. Գ. Խանաղեանցն, որ զինուորագրութեան պատճառով բացակայ էր Վաղարշապատից Նորին Օծութեան գալստեան օրը։

Նոյն օրը Նորին Օծութիւնն, ուղեկցութեամբ սինոդականների, դուրս եկաւ վեհարանից, շրջեց ամենուրեք, տնտղելու Վանքի նորոգութիւնքն և Տպարանի շինութիւնն և արաւ կարևոր նկատողութիւնք, շնորհակալութիւն յայտնելով Ս. Ներսէս և Սարգիս Եպիսկոպոսներին, որոնք հսկել էին նորոգութեանց և շինութեանց։

Ամսոյս 13 ին կիրակի Ս. Աթոռում կատարուեցաւ Հայրապետի չորրորդ տարեդարձի տօնը հանդիսաւոր կերպով։ Նախընթաց շաբաթ երեկոյեան բոլոր միաբանութիւնը շուրջառներով, խաչուխաչվառով, խնկարկութեամբ և երգեցիկ խումբն էլ շարական երգելով առաջնորդեց Նորին Օծութեան Վեհարանից Ս. Եկեղեցին, որ մոմերի և կանթեղների լուսով փայլում էր։ Երեկոյեան ժամերգութիւնից յետո, հսկումն եղաւ։ Երեկոյեան Ս. Աթոռի բակում ճրագալոյց էր։ աչքի ընկնում էր գեղեցիկ վենզելն, որ զանգակատան արևմտեան կողմում դրած էր։ Խուռն բազմութիւն ժողովրդեան շրջում էր, զուարճանալով գեղեցիկ ճրագալոյցով։

Կիրակի առաւօտեան Նորին Օծութեան շնորհաւորութեան